ԿԱՐԾԻՔ

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԵՍՐՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ <<ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ և ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ>> ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

21-րդ դարում համաշխարհային արդի զարգացումներն իրենց ներգործությունն են ունենում ինչպես առհասարակ կրթության, այնպես էլ մասնավորապես բարձրագույն կրթության ոլորտի վրա՝ նոր մարտահրավերներ առաջադրելով ՀՀ բուհերին:

Բարձրագույն կրթության բնագավառում բարեփոխումների համատեքստում կարևորագույն խնդիրներից մեկը ռիսկերի արդյունավետ կառավարման մեխանիզմների, գործիքակազմի և ընթացակարգերի ուսումնասիրությունն ու ներդրումն է, որոնք կարող են նվազագույնի հասցնել հնարավոր բացասական գործոնների ազդեցությունը բուհի կառավարման համակարգում: Այս տեսանկյունից ՀՀ բուհերի ռիսկերի կառավարման գործընթացների ուսումնասիրությունը դառնում է արդիական և ժամանակի պահանջ:

Մեր օրերում<<ռիսկ>> եզրույթի գիտական կատեգորիայի բազում սահմանումներ կան, որոնցից ոչ մեկը չի ստացել համընդհանուր ճանաչում, սակայն բոլոր սահմանումների մեջ առկա են կորստի և վտանգի հասկացությունները: Ընդ որում վտանգն անկանխատեսելի է և կարելի է խուսափել, եթե մարդը հետևում է անվտանգության կանոններին: Մինչդեռ ռիսկի դիմելը որոշվում է սեփական ընտրությամբ՝ գիտակցաբար և նպատակաուղղված: Այլ կերպ՝ ռիսկը կանխատեսելի և կառավարելի վտանգն է /Նիկլաս Լուման, Ուլրիխ Բեկ, Ռիչարդ Շեֆեր, Էնտոնի Գիդդենս և ուրիշներ/: Հետևապես, <<ռիսկերի կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով՝ ակադեմիական ռիսկերի դասակարգման ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ՀՀ բուհերի կառավարման գործընթացում>>:Վերջինս կնպաստի ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետության բարձրացմանն ու կատարելագործմանը:

Սույն ատենախոսությունը նվիրված է նշյալ հիմնախնդրի ուսումնասիրությանը, որով և պայմանավորված է հետազոտության **արդիականությունը:**

Հետազոտության նպատակով հստակ որոշակիացված է, թե ինչ հիմնախնդրի լուծմանն է միտված այս ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակով պայմանավորված հեղինակն առաջադրել է 5 խնդիր, որոնցից յուրաքանչյուրը լուծման իր արտացոլումն է գտել ատենախոսության համապատասխան գլուխներում:

Հետազոտության նորույթում ատենախոսը հստակ ձևակերպել է հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրության դաշտը /ՀՀ 20 բուհ/, բացահայտել ռիսկերի կառավարման գործում առկա թերություններն ու դրանց բարելավման ուղիները՝ առաջադրելով ռիսկերի կառավարման համընդհանուր մոդել, որոնք կապահովեն կառավարման արդյունավետությունն ու կնվազեցնեն հնարավոր բացթողումները բուհում:

Հետազոտության նպատակին, նորույթին և պաշտպանությանը ներկայացվող դրույթներին համապատասխան՝ ատենախոսությունն ամփոփվել է 5 կետից բաղկացած եզրակացություններով ու առաջարկություններով:

Ատենախոսության 1-ին՝ **<<Ռիսկերի հայեցակարգային շրջանակը բարձրագույն ուսումնական հաստատություններում>>** գլխում հանգամանորեն ներկայացվել է <<ռիսկ>> հասկացության հայեցակարգային շրջանակը՝ ուսումնասիրելով տարբեր հեղինակների բնորոշումներն ու սահմանումները /Շախով, Լավրուշին, Վալենցով, Ֆոմիչև, Լուհման, Կարապետյան, Ռեդխեդ, Կապլան, Ռոսա և ուրիշներ/ ռիսկերի վերաբերյալ՝ անդրադառնալով ռիսկերի դասակարգմանը բարձրագույն կրթության միջավայրում: Ատենախոսն այս գլխում հիմնավորել է, որ, պայմանավորված շուկայական հարաբերությունների պահանջներով, բուհերին՝ որպես տնտեսությունն ու դրա ճյուղերը սպասարկող առանցքային ինստիտուտին, առաջադրվել են նոր մարտահրավերներ, որոնք ենթադրում են արդունավետ կառավարման գործընթացում

հանդիպող ռիսկերի հստակ դասակարգում և սահմանում: Հնարավոր կորուստների տեսանկյունից, ատենախոսն այս գլխում առանձնացրել է բուհերի ռիսկերի տեսակները՝ տալով դրանց հանգամանալից վերլուծությունն ու առաջադրելով կանխարգելման ուղիները: Մեջբերելով Պրոնինի, Նոժկինայի տեսակետները՝ հեղինակը նշում է.<<Բուհերի գործունեությանն առնչվող ռիսկերը հազվադեպ են լինում աղետալի: Դա մի կողմից պայմանավորված է նրանով, որ պետությունը կրում է օժանդակ պատասխանատվություն պետական ուսումնական հաստատությունների պարտավորությունների համար, մյուս կողմից այն կապված է կրթական գործունեության խիստ կարգավորման, բուհերի կրթական ծրագրերի լիցենզավորման, պարտադիր հավատարմագրման հետ>>:

Ատենախոսության 2-րդ գլուխը, որը վերնագրված է **<<Բուհերում ռիսկերի կառավարման գործընթացի և ներքին հսկողության համակարգերի ՀՀ և միջազգային փորձի ուսումնասիրությունը>>**, բաղկացած է 3 ենթագլխից, ուր հեղինակը նախ անդրադարձել է բուհերում ներքին հսկողության համակարգին ու ռիսկերի կառավարման հարցերին՝ շեշտադրելով մասնավորապես Թրեդվեյ հանձնաժողովի գործունեության ուղղությունները կառավարչական հաշվետվողականության արդյունավետության մեխանիզմներ մշակելու գործում: Ուշագրավ է հատկապես բուհերում ներքին հսկողության համակարգի միջազգային փորձի ուսումնասիրությունը, ուր ատենախոսը, որպես լավագույն փորձի ազդօրինակ, ներկայացրել է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և ՌԴ-ի բուհերի ներքին հսկողության իրականացման գործիքակազմը՝ տալով յուրաքանչյուրի մասին համապարփակ տեղեկատվություն և վերլուծություն: Որպես տրամաբանական շարունակություն՝ նույն գլխում ատենախոսն ուսումնասիրել և ներկայացրել է Հայաստանյան բուհերի ռազմավարական ծրագրերում ռիսկերի կառավարման և ներքին հսկողությանն ուղղված գործողությունների, ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության տվյալներ: Ուստի բուհը շարունակաբար պետք է գնահատի ռիսկերի կառավարման համար նախատեսված նպատակների

իրականացման արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում փոփոխի քայլերի իրականացման ձևաչափը՝ հիմնավելով նախորդ փորձի արդյունքների վրա:

Ուշագրավ է հատկապես աշխատանքի 3-րդ **<<Ռիսկերի կառավարման շրջանակը որպես ՀՀ բուհերի ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման նախադրյալ>>** գլուխը, ուր որպես գիտական նորույթի կարևորագույն բաղադրիչ, հեղինակի կողմից ներկայացված է բուհերում ռիսկերի կառավարման համընդհանուր մոդել, մշակվել դասընթաց, որոնք ատենախոսության շրջանակում կատարված հետազոտության արդյունքների արգասիք են, և որի գործարկումը, ըստ հեղինակի, կարող է նպաստել ՀՀ բուհերում ռիսկերի արդյունավետ կառավարմանը՝ ապահովելով հասարակության և շուկայի պահանջներին համապատասխան իրենց ներուժի առավել արդյունավետ կիրառումը, թույլ տալով ժամանակին արձագանքել արտաքին միջավայրում կատարվող փոփոխություններին:

Աշխատանքն ինքնուրույն, ավարտուն, ամբողջական ուսումնասիրություն է, որում արվել են առանցքային բացահայտումներ: Ատենախոսը հասել է իր առջև դրած նպատակին՝ լուծելով առաջադիր խնդիրները: Հեղինակի կողմից ներկայացված ռիսկերի կառավարման համընդհանուր մոդելը ուրույն մոտեցում է ՀՀ բուհերում ռիսկերի արդյունավետ կառավարման գործում:

Այնուհանդերձ կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ՝

1. Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Հայաստանյան պետական և մասնավոր բուհերի վերջին տարիների ռազմավարական ծրագրերում ռիսկերի կառավարման և ներքին հսկողությանն ուղղված գործողությունների դրույթներ, ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության տվյալներ, ուր կան բուհեր, որոնք, ըստ հեղինակի, չունեն ռիսկերի կառավարման ներքին հսկողությանն ուղղված մեղանիզմների ընթացակարգ: Ցանկալի կլիներ, եթե հեղինակը ներկայացներ, օրինակ, ՀՊՄՀ ռազմավարական ծրագրի 2022-2025թթ. գործողությունների կատարման պլանը, 2016-20թթ.-ի փոխարեն /էջ 106/, ուր արդեն հստակ ձևակերպված են բուհի ռազմավարական գործողությունների քայլերն ըստ ռազմավարական ուղղությունների՝ անդրադառնալով նաև հնարավոր ռիսկերի

գնահատմանը, որից բխում է նաև բարելավմանն ուղղված գործողությունները::

2. Աշխատանքն առավել կշահեր, եթե ատենախոսը միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ներկայացներ, թե ռիսկերի մեխանիզմների կարգավորման ո՞ր գործիքներն առավել արդյունավետ կլինեին Հայաստանյան բուհերի առկա ռիսկերի կատավարման գործընթացում:
3. Աշխատանքում առկա է անհատ-անձ մանկավարժական եզրույթների շփոթություն:/ էջ 11, 38, 64, 90, 92/:
4. Աշխատանքի տարբեր գլուխներում /43, 50,60 ../ կան որոշ մտքերի կրկնություններ:
5. Կան լեզվառճական և տեխնիկական վրիպակներ:

Վերոնշյալ դիտարկումներն ամենևին չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը:

Սվետլանա Կարապետյանի <<ՀՀ բուհերում ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման և ներդրման հիմնախնդիրները>> վերնագրով ԺԳ.00.01 <<Մանկավարժության տեսություն և պատմություն>> մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջները, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Մանկ. գիտ.թեկնածու, դոցենտ — Ա. Ա. Աշիկյան

Ա.Աշիկյանի ստորագրությունը
Հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար — Մ.Կ.Հովհաննիսյան
Բանասիր.գիտ. թեկնածու

24.10.2022